ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **21-ը հունվարի 2025թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Թամարա Մկրտչյանը, Ծովինար Սարգսյանը, Ռոմիկ Վարդանյանը, Մուշեղ Ներսիսյանը, Սամվել Ոսկանյանը, Սոնա Մարգարյանը, Կարեն Մանասերյանը, Մարատ Շահբազյանը, Տիգրան Նազարյանը և Վահե Վարդանյանը:

Նիստին մասնակցում էին՝

Մալիշկա բնակավայրի վարչական ղեկավար Գարիկ Նազարյանը, Գլաձոր բնակավայրի վարչական ղեկավար Արման Մարտիրոսյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Արմեն Մարգարյանը, Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Առաքելյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկանուշ Ավագյանը և աշխատակազմի գլխավոր մասնագետ Սամվել Այվազյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 21-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 21-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին:
3) Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի ընթացքի մասին:
4) Տեղական վճարի գծով արտոնություններ սահմանելու մասին:
5) Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող GAZ KO-503B (GAZ-53-12) տրանսպորտային միջոցի անհատույց օգտագործման պայմանագրի ժամկետը երկարաձգելու համար համաձայնություն տալու մասին:
6) «ԳԵԼԻՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Մալիշկա բնակավայրի տարածքում նախատեսվող գործունեությանը անհամաձայնություն տրամադրելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 01-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ.</u>

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ **ավագանին որոշեց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի (հատվածներ 1-6):

2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում բյուջեի տնտեսագիտական դասակարգման հոդվածների միջև կատարել սույն

որոշմամբ հաստատված չափաքանակների 25%-ը չգերազանցող ներքին վերաբաշխումներ: Համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել սույն որոշմամբ սահմանված չափաքանակները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 02-Ն)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի 4-րդ եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 03-Լ)*

ԼՍԵՑԻՆ.

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՐՄԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով, ինչպես նաև՝ քննարկելով Գլաձոր բնակավայրի վարչական ղեկավար Արման Մարտիրոսյանի առաջարկը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տեղական վճարի գծով սահմանել արտոնություններ՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված կամ ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց ընտանիքների աղբահանության և խմելու ջրի (Գլաձոր և Վերնաշեն բնակավայրեր) վճարների գծով՝ զրոյական դրույքաչափ, ինչպես նաև՝ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը առկա պարտավորությունների նվազեցում 100 տոկոսի չափով,

2) Գլաձոր բնակավայրի բնակիչ Վահագ Կարապետյանի ընտանիքի խմելու ջրի մասով մինչև 2025 թվականի հունվարի 1-ը առկա տեղական վճարի պարտավորությունների նվազեցում 100 տոկոսի չափով,

3) Եղեգնաձոր համայնքի (բնակավայրերի) նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններ հաճախող՝ 2023 թվականին Արցախից բռնի տեղահանված ընտանիքների երեխաների տեղական վճարի (վարձավճար, ծնողական վճար) նկատմամբ սահմանել արտոնություն՝ զրոյական դրույքաչափ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 04-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ GAZ KO-503B (GAZ-53-12) ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-699 հոդվածների՝ **ավագանին որոշեց.**

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող GAZ KO-503B (GAZ-53-12) տրանսպորտային միջոցի (տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 16XX925306, հաշվառման համարանիշ՝ 855CM61) մասով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված անհատույց օգտագործման պայմանագրի ժամկետը ևս 3 տարի ժամկետով երկարաձգելու համար:

2. Առաջարկել Եղեգնաձոր համայնքի ղեկավարին՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքել փոխադրամիջոցի անհատույց օգտագործման պայմանագրի ժամկետի երկարաձգման համաձայնագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 05-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

«ԳԵԼԻՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱԼԻՇԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍԱՄՎԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, հիմք ընդունելով 2024 թվականի դեկտեմբերի 24-ին Մալիշկա բնակավայրում անցկացված հանրային լսման արձանագրությունը և այն հանգամանքը, որ հանրային լսման արդյունքում բնակչությունը նախատեսվող գործունեությանը տվել է բացասական կարծիք՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Տալ անհամաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում «ԳԵԼԻՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեությանը, համաձայն որի նախատեսվում էր «Մոզ» կոչվող տարածքում 8.22 հա հողատարածքի (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0274-0073) վրա կատարել երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ բազալտների որակական և քանակական գնահատական տալու, հետագայում արդյունահանման նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 06-Ա)*

Նիստին ներկա ավագանու անդամներ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԵՂԻՇԵ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը

_____